


Հաստատված է
Խաչատուր Արուսյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի
2015 թվականի մարտի 31-ի նիստում
գիտական խորհրդի նախագահ
Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան



ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ-ՈՒՄ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է դասախոսների, աշխատակիցների, ուսանողների հարցումների նպատակները, պահանջները, առարկան, հարցման անցկացման կարգը և պարբերականությունը՝ ՀՊՄՀ-ում:

1.2. Կանոնակարգի դրույթները կիրառելի են ՀՊՄՀ-ի Կրթության բարեփոխումների և որակի վարչության, կառուցվածքային ստորաբաժանումների, համալսարանի գիտահետազոտական անձնակազմի, ինչպես նաև ուսանողների կողմից նախաձեռնած հարցումների նկատմամբ:

1.3. Հարցումների նպատակն է ՀՊՄՀ-ում ուսումնական ու կրթական գործընթացից ուսանողների բավարարվածության աստիճանի մշտադիտարկումը, ինչպես նաև ուսումնասիրվող գործընթացներին, միտումներին և սոցիալական երևույթներին ուսանողների տեղեկակցվածության և բավարարվածության բացահայտումը:

1.4. Համալսարանում հարցումների հիմնական պահանջներն են՝

- Հարցումների բովանդակության համապատասխանությունը համալսարանի նպատակներին և խնդիրներին,
- Մասնակցության գաղտնիությունը,
- Հարցման գործընթացի համակարգվածությունը և պարբերականությունը,
- Հարցման չափանիշների կիրառումը,

- Շարունակականությունը,
- Տեղեկատվական հազեցվածություն:

Հարցումները կարող են իրականացվել ՀՊՄՀ ռեկտորի և պրոռեկտորների, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, գիտահետազոտական ծրագրերի ղեկավարների, ինչպես նաև այլ կազմակերպությունների ներկայացուցիչների, ուսխորհրդի, համալսարանի ասպիրանտների և ուսանողների

1.5. կողմից իրենց ուսումնական պրակտիկայի և հետազոտական աշխատանքների շրջանակներում:

1.6. Հարցումների անցկացումը և վերլուծությունը ՀՊՄՀ-ում իրականացնում է

- Կրթության բարեփոխումների և որակի վարչությունը,
- Հեռանկարային ծրագրերի մշակման և մշտադիտարկման վարչությունը,
- Ֆակուլտետների աշխատանքային խմբերը,
- Հետազոտություններ կատարող ուսումնառողները գիտական աշխատանքի շրջանակներում:

1.7. Համալսարանի կողմից ուսումնառողների հարցումները կարող են ունենալ թե գիտական, թե կիրառական ուղղվածություն: Առաջնայնության կարգով հարցումները բաժանվում են 3 հիմանկան խմբերի.

- 1) Հարցումներ՝ ՀՊՄՀ ստորաբաժանումների կրթության որակի բարելավման համար, որոնք անցկացվում են կրթության որակի ապահովման համակարգի շրջանակներում, կրթական գործընթացի իրավիճակի բազմակողմանի ուսումնասիրության, շահառուների և սպառողների բավարարվածության նպատակով:
- 2) Գիտական ուղղվածություն ունեցող հարցումներ, կազմակերպված համալսարանի ամբիոնների պրոֆեսորադասախոսական աձնակազմի, հետազոտական ծրագրերի ղեկավարների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից, որոնք իրականացնում են իրենց հետազոտական աշխատանքները:

3) Կուրսային, մագիստրոսական ատենախոսության աշխատանքների և ուսումնական պրակտիկայի շրջանակներում իրականացվող հետազոտություններ՝ ուսանողների կողմից:

Յուրաքանչյուր նշված խմբում հարցումների անցկացման ընթացակարգը ներկայացված է ստորև՝ առանձին բաժիններում:

1.8. Հարցման ընթացքում ստացած տվյալները կարող են հրատարակվել համալսարանի ղեկավարության թույլտվությամբ՝ պահպանելով հարցման մասնակիցների գաղտնիությունը:

2. Ուսումնառողների հարցումը՝ կրթության որակի ապահովման համակարգում

2.1. Տվյալ խմբում ներառված են հարցումներ, որոնք ուղղված են ՀՊՄՀ-ի կրթության որակի ապահովմանը՝ կրթության որակի և ուսումնական գործընթացի անմիջական սպառողների բավարվածության աստիճանի պարզաբանմանը:

2.2. Տվյալ հարցումների անցկացման նախաձեռնողը կարող է լինել համալսարանի ռեկտորը, պրոռեկտորները, կրթության որակի ապահովման վարչությունը, ինչպես նաև համալսարանի այլ շահագրգիռ ստորաբաժանումներ:

2.3. Տվյալ հարցումների կազմակերպման իրականացումը ապահովում է Կրթության բարեփոխումների և որակի վարչությունը կամ հարցումը նախաձեռնող այլ ստորաբաժանումներ: Անմիջական կատարողն է հանդիսանում Կրթության բարեփոխումների որակի վարչությունը, ՀՊՄՀ-ի հեռանկարային ծրագրերի մշակման և մշտադիտարկման վարչությունը կամ հարցումը նախաձեռնող այլ խմբերը և կառույցները: Հարցմանը անց են կացվում շահագրգիռ ստորաբաժանումների հետաքրքրված ներկայացուցիչների /ղեկանատների, ամբիոնների և այլ/, ինչպես նաև ուսանողական խորհրդի ներգրավմամբ:

2.4. Կրթության որակի ապահովման համակարգի հարցումները անց են կացվում տարեկան պլանավորման համաձայն յուրաքանչյուր տարի ըստ հրատապության և անհրաժեշտության՝ լրացուցիչ հարցերի ներգրավմամբ:

2.5. Ուսումնական տարվա սկզբին Կրթության բարեփոխումների և որակի վարչությունը կազմում է ուսումնառողների հարցման պլան-ժամանակացույցը: Նրա մեջ մտնում են Կրթության բարեփոխումների և որակի վարչության կողմից ամեն տարի անցկացվող հարցումները, ինչպես նաև ստորաբաժանումների կողմից նախաձեռնվող հետազոտություններ ընթացիք տարվա կտրվածքով՝ ուսումնական գործընթացի որակի խնդիրները ուսումնասիրելու համար: Նախատեսված հարցումները պլան-ժամանակացույցի մեջ ներառման համար ստորաբաժանումները պետք է նախապես դիմեն Կրթության բարեփոխումների և որակի վարչություն՝ ուստարվա սկզբին /սեպտեմբերի ընթացքում/:

2.6. Հարցման համար կազմված պլան-ժամանակացույցը հաստատվում է ՀՊՄՀ-ի Գիտխորհրդի որակի ապահովման հանձնաժողովի կողմից:

2.7. Յուրաքանչյուր հարցման անցկացման սկզբից երկու շաբաթ առաջ, Կրթության բարեփոխումների և որակի վարչությունը տեղեկացնում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարին հարցման անցկացման վերաբերյալ և տրամադրում է հարցաշարը՝ ծանոթանալու համար: Մեկ շաբաթվա ընթացքում ստորաբաժանման ղեկավարը կարող է դիմել Վարչություն՝ հարցման վերաբերյալ իր առաջարկների, հարցերի շտկման կամ լրացուցիչ հարցերի ավելացման համար: Վարչությունը, հնարավորինս, հաշվի է առնում բոլոր առաջարկությունները:

2.9. Վարչության կողմից պլան-ժամանակացույցով չնախատեսված հարցման անհրաժեշտության դեպքում, դրա մշտադիտարկումը իրականացվում է տվյալ ուղղությունը համակարգող պրոռեկտորի կողմից:

2.10. Հաստատված պլան-ժամանակացույցով հարցման անցկացման աշխատանքները, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների աշխատանքների իրականացումը և հարցումների փաթեթների նախապատրաստումը կարգավորում է Կրթության բարեփոխումների և որակի վարչությունը:

2.11. Հարցման անցկացումից մեկ շաբաթ առաջ կառուցվածքային ստորաբաժանումները նշանակում են ներկայացուցիչներ, որոնք ապահովում են

փոխգործակցությունը հարցմանը ենթակա ուսանողական խմբերի հետ: Նրանք պատասխանատու են նախապես տեղեկատվություն տալ ուսանողներին հարցման անցկացման վայրի և ժամանակի մասին:

2.12. Հարցումները անցկացվում են Կրթության բարեփոխումների և որակի վարչության մասնագետի կողմից, համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների ներգրավմամբ:

2.13. Հարցումներին մասնակցող ուսումնառողները հարցաթերթիկը լրացնում են ինքնուրույն՝ պահպանելով գաղտնիությունը: Պատասխանները տրվում են ըստ հարցաթերթիկը լրացնելու ուղեցույցի: Հարցումները ուղղորդվում են հարցման նպատակները պարզաբանելով և ուսումնական գործընթացի շրջանակներում կազմակերպման ձևերի, ինչպես նաև հարցաթերթիկների նմուշների ցուցադրությամբ, որոնք կիրառվելու են հարցման ընթացքում:

2.14. Հարցման մշակումը իրականացվում է Կրթության բարեփոխումների և որակի վարչության մասնագետների, հարցման գործընթացին ներգրավված ստորաբաժանումների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այլ կառույցների կողմից նախաձեռնած հարցման արդյունքների մշակումը իրականացնում է ստորաբաժանումի աշխատանքային խումբը՝ հաշվետվություն ներկայացնելով Կրթության բարեփոխումների և որակի վարչություն:

2.15. Հարցման արդյունքների համաձայն Կրթության բարեփոխումների և որակի վարչությունը կազմում է վերլուծական զեկույց /տեղեկանք/ ՀՊՄՀ-ի Գիտխորհրդի որակի ապահովման հանձնաժողովի համար:

2.16. Կրթության բարեփոխումների և որակի վարչության ղեկավարը հարցման արդյունքների վերաբերյալ զեկուցում է ՀՊՄՀ-ի Գիտխորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նիստի ժամանակ: Հարցումներին մասնակցած կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները հրավիրվում են Կրթության որակի ապահովման վարչություն՝ ստացած տվյալները քննարկելու համար:

2.17. Հարցման տվյալները հաշվի են առնվում ՀՊՄՀ-ում՝ կրթության որակի հետ կապված որոշումների ընդունման ժամանակ:

2.18. Հարցումների ընթացքում ստացած արդյունքները նախատեսված են համալսարանի ներքին օգտագործման համար:

2.19. Հարցումների արդյունքների տեղեկության օգտագործումը համալսարանից դուրս սահմանվում է տվյալ ուղղությունը համակարգող պրոռեկտորի կողմից և համաձայնեցվում Կրթության բարեփոխումների և որակի վարչություն:

2.20. Հարցաթերթիկները պետք է պահվեն Կրթության բարեփոխումների և որակի վարչությունում. թղթային տարբերակով՝ մեկ տարվա ընթացքում, էլեկտրոնային տարբերակով՝ 3 տարվա ընթացքում, եթե պահպանման այլ պայմաններ սահմանված չեն:

3. Ուսանողների գիտահետազոտական ոլորտի հարցումներ

3.1. Ուսանողների գիտահետազոտական ոլորտի հարցումները կարող են անցկացվել ամբիոնների, ֆակուլտետների ինչպես նաև համալսարանի գիտահետազոտական ստորաբաժանումների կողմից:

3.2. Ուսանողների գիտահետազոտական ոլորտի հարցումների իրականացման համար անհրաժեշտ է ձեռք բերել համալսարանի գիտական գծով պրոռեկտորի համաձայնությունը: Համապատասխան համաձայնություն ստանալու նպատակով հետազոտողները համալսարանի գիտական գծով պրոռեկտորին ներկայացնում են դիմում՝ նշելով հարցման թեմատիկան, անցկացման անհրաժեշտության հիմնավորումը (կարևորությունը, նպատակահարմարությունը), ինչպես նաև երաշխիքներ՝ հետազոտության արդյունքները տրամադրելու մասին: Դիմումին կցվում են նաև հարցման և հարցաթերթիկի հիմնական դրույթները: Համալսարանի գիտական գծով պրոռեկտորը անցկացման թույլատվությունը կարող է վավերացնել կարգադրությամբ և անհրաժեշտ պայմանների ապահովմամբ (արդյունքները ստանալու շահագրգռվածության դեպքում) կամ ընձեռելով կազմակերպիչներին ինքնուրույն անցկացնելու հնարավորություն՝ բանավոր պայմանավորվելով հետազոտության օբյեկտ հանդիսացող ստորաբաժանման ղեկավարի հետ:

3.3. Հարցման ծրագիրը և հարցաթերթիկը անհրաժեշտ է համաձայնեցնել համալսարանի Կրթության բարեփոխումների և որակի վարչություն հետ, եթե հարցման թեմատիկան վերաբերում է ուսանողների բավարարվածությանը և ուսումնական գործընթացի որակի վերլուծությանը:

3.4. Ստացված տեղեկատվության օգտագործումը, կիրառումը և մասսայականացումը համալսարանի ներսում որոշում է գիտական գծով պրոռեկտորը այն ստորաբաժանման ղեկավարի հետ, որտեղ անցկացվել է հարցումը:

3.5. Ուսումնառողների հարցման արդյունքները պարտադիր կարքով ներկայացվում են համալսարանի Կրթության բարեփոխումների և որակի վարչություն հաշվետվության և կամ աշխատանքային նյութի տեսքով՝ հարցման անցկացումից հետո 10-օրյա ժամկետում:

3.6. Հարցման կազմակերպիչները՝ ստացված արդյունքները համալսարանից դուրս կարող են հրապարակել կամ հրատարակել գիտական գծով պրոռեկտորի և համալսարանի Կրթության բարեփոխումների և որակի վարչության գրավոր թույլատվության դեպքում, եթե այն չի վնասում համալսարանի հեղինակությանը:

4. Ուսանողների կողմից կատարած հարցումներ ուսուցման ընթացքում

4.1. Ուսումնառության ընթացքում ՀՊՄՀ-ում ուսումնառող ուսանողները կարող են անցկացնել հարցումներ գիատեխտագոտական աշխատանքների, մանկավարժական և ուսումնական պրակտիկայի, կուրսային աշխատանքների, մագիստրոսական ատենախոսությունների շրջանակներում:

4.2. Հարցումների անցկացման համար ուսանողները պետք է կազմեն հարցաշար, որն ուսումնասիրվում և հաստատվում է ուսանողի ղեկավար հանդիսացող դասախոսի կողմից:

4.3. Հարցումների անցկացումը ուսանողը համաձայնեցնում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարի և կամ դասախոս/ների հետ, որի գործունեության տիրույթում պատրաստվում է անց կացվել հարցումը: Համապատասխան

ստորաբաժանման ղեկավարի պահանջով հարցում անցկացնող ուսանողը ներկայացնում է հարցման ծրագիրը, հարցաշարը և անցկացման արդյունքները:

4.4. Հարցումների անցկացման և դրանց արդյունքների համար պատասխանատու է տվյալ ուսանողի հետազոտության անմիջական ղեկավար դասախոսը:

4.5. Ուսանողների կողմից անցկացված հարցումների արդյունքները պարտադիր ներկայացվում են ՀՊՄՀ կրթության բարեփոխումների և որակի վարչություն:

4.6. Ուսանողները իրավունք ունեն ստացված արդյունքները հետազոտության անմիջական ղեկավար դասախոսի համաձայնությամբ ընդգրկել իրենց աշխատանքներում, ինչպես նաև հանդես գալ կոնֆերանսներում և տպագիր մամուլում տեղեկատվության էթիկայի պահպանմամբ, եթե այն չի վնասում ՀՊՄՀ-ի հեղինակությանը:

5. Հարցումները որպես որակի մշտադիտարկման, վերլուծության եվ գնահատման մեխանիզմ

5.1. Հարցումները օգտագործվում են ուսումնասիրվող գործընթացի բարելավման, գնահատման, շահակիցների հետ հետադարձ կապի, նոր նախագծերի մշակման նպատակով:

5.2. Հարցումների անցկացումը որպես որակի մշտադիտարկման և գնահատման գործիքներ է առում հետևյալ մակարդակները՝

- Կրթական գործընթացի բաղադրյալների ստուգումներ (անհամապատասխանությունների բացահայտում):
- Արդյունքների մշակում, ներկայացում և վերլուծություն, հաշվետվությունների և առաջարկությունների պատրաստում:
- Շահագրգիռ կողմերի և որոշում կայացնող մասնագետների տեղեկացում (նաև բացահայտված անհամապատասխանությունների մասով):
- Անհամապատասխանությունների վերացմանն ուղղված գործողությունների մշակում և կառավարող փոխազդեցությունների ձևավորում դրանց իրականացմամբ որակի բարելավման համար:

Տվյալների հավաքագրումը իրականացվում է կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ բաժիններում բերված հարցումների ձևերով: Հարցումը կարելի է կատարել թղթային, էլեկտրոնային ձևերով բուհի տարածքում կամ առցանց բուհից դուրս , ինչպես նաև ֆոկուս-խմբերի միջոցով:

5.3. Հարցման արդյունքները պետք է հասանելի լինեն համալսարանի բոլոր շահակիցներին:

Համալսարանում չափման և մշտադիտարկման առարկա կարող է հանդիսանալ՝

- Ուսումնառողների որակը,
- Դասավանդող անձնակազմի որակը և հմտությունները,
- Ռեսուրսների և նրանց ապահովման որակը,
- Կրթական ծառայությունների գործունեության որակը,
- Կառավարման համակարգի գործունեության որակը:
- Այլ

5.4. Տվյալների հավաքագրումը պետք է կատարվի ըստ նախապես մշակված պլանի և ձևաչափերի: Ըստ դրա կազմվում է անհամապատասխանությունների վերացման գործողությունների ժամանակացույց-պլան:

Գործընթացի ընդանրացված նկարագրությունը ներկայացվում է քարտեզի միջոցով (հավելված)՝ ըստ քայլերի հաջորդականության:

6. Հարցման թերթիկների մշակում

Հարցման թերթիկները մշակելիս ուշադրություն է դարձվում հարցերի բովանդակությունը և հաջորդականությունը:

Գործընթացը պահանջում է՝

1. հստակություն. դրված հարցերի առավելագույն ձևով պարզ և հասկանալի ներկայացումը,
2. խուսափել բազմաթիվ պատասխանների ներառումից,
3. բաց հարցերի մշակում՝ շահակիցների կարծիքը ստանալու համար բուհի կրթության որակի մասին,

4. բոլոր բանալի հարցերի ներառում՝ ստացված ինֆորմացիայի հավասար- տելիության ապահովման համար,

5. բացառել հարցերը, որոնք կխանգարեն իրական վիճակի բացահայտմանը: Հարցման թերթիկներում հարցերը անհրաժեշտ է բաժանել խմբերի՝

1. բավարարվածությունը ուսումնական գործընթացից,
2. բավարարվածությունը բուհում տարվող գիտահետազոտական գործընթաց- ներից, 3. բավարարվածությունը առկա ռեսուրսներից:

Հարցման թերթիկը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

1. հարցման բնույթը և նպատակը
2. ում կողմից է իրականացվում,
3. հարցերի ներկայացումը «պարզից –բարդ՝ կառուցվածքով,
4. բաց հարցեր,

5. տվյալների հրացմանը մասնակցողի վերաբերյալ (սեռ, տարիք և այլն):

Հարցերի պատասխանները պետք է մշակել գնահատման աճման կամ նվազման կարգով՝ հարցաթերթիկների արդյունքների վերլուծության արդյունավետությունը ապահովելու նպատակով:

7. Հարցման արդյունքների մշակում եվ վերլուծություն

Տվյալ խնդիրը լուծելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է կատարել լրացված հարցման թերթիկների հարցերի վիճակագրական վերլուծություն հարցերի առանձին խմբերի համար (Excel կամ SPSS ծրագրի միջոցով): Այնուհետև կատարվում է մշակված տվյալների վերլուծություն, հիմնվելով տարբեր տիպի դիագրամների վրա: Վերլուծության հիման վրա կայացվում են որոշումներ կրթական որակի բարելավման ուղղությամբ ըստ առավել թույլ կողմերի:

ԱՆԿԵՏԱՎՈՐՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄ

